



Արա Պողոսեան.

## «Հայաստանն ու Իրանը պետք է ի վերջոյ դառնան ռազմավարական գործընկեր»



Քաղաքագետ Արա Պողոսեանը գրում է.

«Իրանը մեր բարեկամն է, ու դա ոչ թե նրա համար, որ մենք շատ լաւ ենք, այլ պարզապէս համընկնում են մեր շահերը՝ Իրանը չի ուզում տեսնել հզօր Թուրքիա եւ թուրանիզմի գերիշխանութիւն, մենք էլ չենք ուզում տարածաշրջանը տեսնել թուրքերի եւ

թուրանիստների գերիշխանութեան ներքոյ:


Հետեաբար Հայաստանն ու Իրանը պետք է ի վերջոյ դառնան ռազմավարական գործընկեր համատեղ մշակելով տարածաշրջանային քաղաքականութեան ռազմավարութիւնը:

Մենք ասելով նկատի ունենալ Հայաստանի ճակատագրով իսկապէս մտահոգ մարդկանց, այլ ոչ թե Հայաստանի հաշիւն խաղեր խաղացող լայրծուններին:

Յ.Գ. Ի դէպ, երբ խօսում էք ռեզիւտայիզմի մասին, սա հենց ռեզիւտայիզմի քաղաքականութեան կարեւոր բաղադրիչն է՝ գտնել տարածաշրջանում շահակիցների եւ մշակել ընդհանուր օրակարգ»:

«Yerkir.am»

## Ռեյխսի. «ՍԻՌՆԻՍՏԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԳԱԶԱՅԻ ԶԱՏԻԱՃՈՒՄ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ, ԱԵԼԻ ՄԵՃ Է, ՔԱՆ «ԱԼ ԱՔԱՅԻ ՓՈԹՈՐԻԿ»-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ»



«ԱԼԻՔ» - Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ այաթ. Սեյեդ Էրահիմ Ռեյխիսի, սիրոնիստների վերջին պարտութիւնը Գազայի հատածում ցամաքային գործողութիւնների ժամանակ, աւելի մեծ է համարել քան «Ալ Աքսայի փոթորիկ»-ի գործողութեան ժամանակ:

ԻՌԱԿ-ի հաստատմամբ՝ նախագահը այս մասին յայտարարել է. «Ալ Ջազիրա» հեռուստատեսիոն տաճ հարցազրոյցում եւ ընդգծել. «Առաջին պարտութեան ժամանակ նրանք յայտարարեցին, թէ անակնկալի են եկել, իսկ երկրորդ պարտութեան ժամանակ նրանք

մինչեւ ատաւները զինւած բանակով յարձակեցին Գազայի վրայ եւ Դիմադրութեան շարժումը, նրանց ստիպեց նահանջել: Այս իրադարձութիւնը մեծ յաղթանակ գրանցեց Պաղեստինի ժողովրդի անունով»:

Ասուլիսի ընթացքում Հանրապետութեան նախագահը, Գազայի պատերազմի մասին ամերիկացիների ուղերձներին ի պատասխան ասել է. «Ամերիկացիների ուղերձներին բացայտօրէն պատասխանել են Դիմադրութեան խմբերը: Սակայն տարօրինակ է, որ ամերիկացիները ուրիշներին ասում

են, որ որեւէ քայլ չձեռնարկեն եւ իրենք աշխարհի ժողովրդի աչքի առաջ սիրոնիստներին են տրամադրում նրանց անհրաժեշտ բոլոր զէնքերը, տեխնիկան եւ սարքաւորումները, Գազայում ոճրագործութիւններ իրականացնելու համար»: Ասուլիսի այլ բաժնում նախագահ Ռեյխիսի ասել է. «Այն, ինչ կատարել է սիրոնիստական ռեժիմը՝ կանանց եւ երեխաների սպանութիւնից մինչեւ հիանալանցների, եկեղեցիների եւ սկիւիների վրայ յարձակումները, լրացողների ու նրանց ընտանիքների

(Շար. 8-րդ էջում)

Հասան Շէյխօլէւամ.

## «Իրանը փորձում են ներքաշել Մերձաւոր Արեւելքի հակամարտութեան մէջ»

Այսօր շատերը ջանքեր են գործադրում Իրանին Մերձաւոր Արեւելքի հակամարտութեան մէջ ներքաշելու համար: Այս մասին Բելոռուսիայի ազգային հեռուստատեսութեանը տաճ հարցազրոյցում յայտարարել է Իրանի փոխարտգործնախարար Մոհամմադ Հասան Շէյխօլէւամին:

«Այն, ինչ հիմա կատարում է տարածաշրջանում, մեծ ողբերգութիւն է: Իսրայելը խախտում է միջազգային իրա-

ւունքի բոլոր հնարաւոր օրէնքները: Նրանք սպանում եւ բռնի գործողութիւններ են իրականացնում խաղաղ բնակչութեան նկատմամբ: Այս խնդրի լուծման մեր առաջարկներն արդէն հնչել են: Հանրաբւէ պետք է տեղի ունենայ այս տարածաշրջանում ապրող բոլոր ժողովուրդների մասնակցութեամբ, ներառեալ Պաղեստինը եւ բոլոր փախստականները: Մենք սա համարում ենք խնդրի լուծում», - ասել է փոխարտգործնախարարը:



## Ռուսաստանի համար անիմաստ է ԱՄՆ-ի հետ լիարժէք հակամարտութիւն սկսելը

Եւրոմիութիւնը, վիճելով Ռուսաստանի հետ, մտնեցրել է իր այլաբերումը: Մոսկւան եւ Վաշինգտոնը վաղ թե ուշ համաձայնութեան կը գան, բայց Բրիւսելը չի վերականգնի իր ազդեցութիւնը, ասել է ՌԴ Անվտանգութեան խորհրդի փոխնախագահ Դմիտրի Մեդւեդեւը, - հաղորդում է «SUSU»-ը:

«Միացեալ Նահանգների դրոյմամբ որոշելով դառնալ մեր երկրի ամենաչար թշնամին, Եւրոպան իրեն ընդունալ մտնեցրեց վերջնական այլաբերումը: Մեծ տերութիւնները վաղ թե ուշ պայմանաւորելու են, թէ ինչպէս են ապրելու տեսանելի հեռանկարում նոր պայմաններում: Վաշինգտոնը չի կարող խուսափել Ռուսաստանից, Չինաստանից եւ զորքալ Հարաւից: Եւ մեզ հա-



մար էլ է անիմաստ լիարժէք հակամարտութիւն սկսել Ամերիկայի հետ», - գրել է նա VK ցանցի իր էջում:

Իսկ այդ «քաղցրիկ փոթորիկ պատաւ Եւրոպան» շուտով կը վերանայ, յսելել է Մեդւեդեւը: «Նրա իրաւունքներն

(Շար. 8-րդ էջում)

**Պատերազմի ընթացքում Գազայում զոհւել է 3342 երեխայ**

(Տես 8-րդ էջում)

**ARAM COFFEE**  
**ԱՐԱՄ**  
 قهوه آرام  
 فروشگاه مرکزی:  
 قائم مقام فراهانی-شماره ۶۴  
 88303478 ԵՎ 88308730  
 www.aramcoffee.com  
 instagram:aram\_coffee







Հոկտեմբերի 24-ը ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սու Սարգսյանի ծննդյան օրն է: Այդ առիթով «Համազգային» թատրոնում կայացավ «Սու Սարգսյան. վիպակներ», «Նահապետը», «Երկիրը երկիր է» գրքերի շնորհանդեսը:

Շնորհանդեսին «Համազգային» Հայ կրթական և մշակութային միության անունից խօսք ասաց «Համազգային»-ի Գեներոնական վարչության անդամ Արտաշես Շահրազեանը:


Նա անդրադարձավ Սու Սարգսյանի ազգային գործի կերպարին նշելով, որ միայն Սու Սարգսյանի նման կերպարների, նրանց ապրած կեանքի ու ազգային նվիրումի շարունակությունն է, որ այս օրհասական օրերին կարող է փրկել հայ ժողովրդին:

Խորհրդանշական էր վարպետի ծննդյան օրը նշել նրա հիմնադրած «Համազգային» թատրոնում:

Հանդիսատեսի ուշադրությանը ներկայացրեց ասանդոթ դարձած թանգարանային ներկայացումը՝ «Ծննդյան օրերը Սենիոր Կուպելյոյի տանը», որը ամեն տարի հանդիսատեսին ներկայացնում է վարպետի ծննդյան օրը:

«Համազգային»-ի Երևանի գրասենյակ

## «Համազգային» թատրոնում տեղի է ունեցել Սու Սարգսյանի գրքերի շնորհանդեսը



## Մի քիչ «փրկված» ակնոց ունեմ՝ բերված Ղարաբաղից...



Երևանի Կոմիտասի պողոտայում արցալիցի Միերին այս օրերին շատերն են տեսել՝ մեկ պարկ Արցախից բերած օպտիկական ակնոցներ վաճառելիս: Սա այն էր, ինչ Ստեփանակերտի օպտիկայի խանութից հասել է Երևան:

«Երբ առաջին օրն ասացին, որ պետք է շուտ լքենք Ստեփանակերտը, ով որպես չգալ կը մնա, քանի որ աղբր-բեջանցիներն արդեն «Կրկման» կոչող թաղամասից իջնում են: Հենց առաջին օրն անմիջապես դուրս եկանք: Որքան մեկի մտքով չէր անցնում օպտիկա կամ այլ բան վերցնի իր հետ: Մեկ-երկու օր յետոյ կապ հաստատեցինք բեռնա հետ: Մայրս եղբորը խնդրեց,



րեց, որ խանութից մի տուպրակ ակնոց բերի: Քեռիս էլ չմերժեց, բերեց: Երեւանում մօտս գումար չկար, հանեցի փողոցում դրեցի և սկսեցի վաճառել»,- «Panorama.am»-ի հետ զրոյցում պատմեց Միեր Գեորգեանը:

(Շար. 6-րդ էջում)

## Կրոնների երկխոսութիւն՝ Իսլամական կապի և մշակոյթի կազմակերպութեան կենտրոնատեղիում



Հոկտեմբերի 25-ին, Բալանական կապի և մշակոյթի կազմակերպութեան կենտրոնատեղիում տեղի ունեցավ Հիւս, Մուննի և կրօնական փոքրամասնությունների հոգեւորականների հանդիպում՝ ի դատապարտում Գազայում սինիստական ռեժիմի իրագործած ոճրագործութեան:

Բալանական կապի և մշակոյթի կազմակերպութեան Մշակոյթների և կրօնների երկխոսութեան կենտրոնի նախագահ Ալիաքար Զիային բարի գալուստ մաղթելով ներկաներին ասել է. «Մենք յուսով ենք, որ Բրանի և այլ երկրների աստուծային առաջնորդների ուղերձը կը հասնի աշխարհի ղեկավարների ականջին և կը կանխեն այս բարբարոսությունները»: Նա յոյս է յայտնել, որ պաղեստինցի ժողովուրդը, որը գրկած է սննդից ու ջրից, կը տիրանայ իր մարդկային իրաւունքներին:

Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք Սարգսեանի ներկայացուցիչ Տ. Գրիգորիս քին, Ներսիսեանցը իր խօսքում նշել է. «Յիսուս Քրիստոսը թագաւորական և աստուծային օրէնքի մեկնաբանութեան մէջ ասաց, որ կեանքի ճանապարհի եզրին վիրատուրած մարդուն պիտի հոգ տանել, սպեղանի պիտի դնել նրա վերքերին և մխիթարել նրան մխիթարութեան խղով և Սուրբ Հոգու գործութեամբ և այն պիտի անել առանց որեւէ խտրականութեան»:

Նա յանդէպ է. «Յիսուս Քրիստոսի

մեկնաբանութեամբ մարդու բարեկամ կարող է լինել դեղնամորթ, սեւամորթ կամ այլիտակաւոր: Մենք տեսնում ենք, որ Աստուած խտրականութիւն չի դնում ռասսաների նկատմամբ: Այսօր նրանց, ովքեր բանդում են իրենց հարեանի տները, տեղահանում են իրենց մարդ եղբորը ու գաղթի ճամբին նրանց յարձակման են ենթարկում, պէտք է ասել, որ նրանք ոչինչով չեն տարբերում իրենց երեխաներին մորքը՝ կուրքի շիկացած բազուկների վրայ կիզող քանանացի ցեղերից»:

Նա ակնարկելով Թորային ասել է. «Թորան բազմիցս պատուիրել է Բարալի ժողովրդին և ասել, որ բարութեամբ պիտի վերաբերուեն իրենց կողքին ապրող ցեղերին: Աստուած ասում է, որ Բարալի ժողովուրդը նրանց ովքեր ապրուստ են փնտրում իրենց մերձակայքում, պիտի վերաբերուեն ինչպէս բարեկամների»: Քահանայ Հայրը իր խօսքը եզրակացնելով նշել է. «Այսօր մենք յստակ տեսնում ենք, որ համաշխարհային սինիզմը իր կործանարար սուտ բարոյական և ռազմական մեթոնան, խզում է երկրների յարաբերութիւնները և աւերում տարբեր ազգերի կեանքը»:

Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենյակ

\*) Փոխաբերական առումով մորթը նշանակում է սարսափելի ու անկազուրուժ, որն անընդհատ պահանջում է մարդկային անմեղ զոհաբերութիւններ:

## Ատրպատականի հայոց թեմի առաջնորդի ելոյթը «Օֆոդ» հեռուստակայանից Գազայում ընթացող սպանդի թեմայով



Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թարիզ - Հոկտեմբերի 22-ի երեկոյան ժամը 22:00-ին, իրանական «Օֆոդ» հեռուստակայանից ուղիղ եթերով հարցազրոյց է ունեցել Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր արք. Զիֆթ-ճեանը:

Գազայում տեղի ունեցող անմարդկայն դէպքերի՝ հազարաւոր անմեղ քաղաքացիների սպանդի, սրբատեղիների հաւասարապես մզկիթների և եկեղեցիների ուժեղացման և պատմական կոթողների ոչնչացման, ու ընդհանրապէս պաղեստինցի ժողովրդի արդար դատի շուրջ հար-

ցերին պատասխանելով Սրբազան Հայրը, յոյս է յայտնել, որ ի վերջոյ միջազգային ընտանիքը արդարութեան վրայ հիմնուած քաղաքականութիւն որդեգրելով, խաղաղութեան ջանակիրը կը հանդիսանայ աշխարհում:

Շուրջ 30 րոպէ տեսած հարցազրոյցի վերջում պատգամ յղելով ակնկիւրներին, Սրբազան Հայրը ասաց. «Իր հայրենի հողից բռնագաղթով չզրկւելու և այնտեղ մնալով, նահապետակերտ գնով պայքարելու ոգին, պաղեստինցի ժողովրդի պատգամը թող լինի, անիրաւութեան գոհ բոլոր ազգերին»:





### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու մեր խորին շնորհակալություններն ենք յայտնում «Թու-նեան» փարմ. դպրոցի փրկարար, փոխպետնուհի Շաքե Անտրեանին, դպրոցում պաշտօնավարող բոլոր ուսուցչուհիներին՝ Ուսուցչի փօսի առթիվ, իրենց շնորհակալիքի, ջերմ գնահատանքի եւ երախտագի-տության անկեղծ արտայայտություններ ցուցաբերելու համար:

Շնորհակալություն ենք յայտնում՝ նաև դպրոցի ծնողական խոր-հրդրդի բոլոր անդամ-անդամուհիներին, որ իրենց միասնելու եւ անխնայ ջանքերով, ամենայն ուշադրությամբ հիւրընկալեցին բոլորին:

**«ԹՈՒՆԵԱՆ» ԳԳՐՈՋԻ  
ՀԱՆՉԱՍԻ ԿՈՉԻՍՏ ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՅՉՈՒՅԻՆԵՐ**

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Կրթական խորհուրդը իր խորագրաց ցուցակներին ենք յայտնում Շաքե եւ Ներմինե Նազարբեգեաններին, Նազարբեգեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ՓԱՌՔՈՒՅԻ ՂԱԴԻՄԵԱՆԻ  
(ՆԱԶԱՐԲԵԳԵԱՆ)  
ցաւալի մահուան առթիւ:  
Թ. Հ. Թ. ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորագրաց ցուցակներին ենք յայտնում Շաքե Նազարբեգեանին, Ղադիմեան եւ Նազարբեգեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՓԱՌՔՈՒՅԻ ՂԱԴԻՄԵԱՆԻ  
(ՆԱԶԱՐԲԵԳԵԱՆ)  
ցաւալի մահուան առթիւ:  
ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ «ԱՐԱՐԱՍ» ԱԳՁ.  
ԳԳՐՈՋԻ ՏԵՏՉՈՒԹԻՒՆ,  
ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ  
ՏՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

**ԱԼԻՔ-ի**  
Internet-ային էջն է՝  
[www.alikonline.ir](http://www.alikonline.ir)

**ԱԼԻՔ**  
Օրաթերթ  
Արտոնատեր՝ ԱԼԲԵՐՏ ԱԾԵՍԵԱՆ  
Հեռախոս՝ (0098-21) 88768567 - 88761154  
Հեռապատճեն՝ 88760994  
Փոստարկը՝ 11365-953 Թեհրան - Իրան

**آلیک**  
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری  
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک  
مدیر مسئول: آلبرت عجمیان  
خیابان سه روزدی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶  
کدپستی: ۱۵۵۸۳۳۹۱۱  
تهران صندوق پستی: ۱۱۳۶۵-۹۵۳  
تلفن: ۸۸۷۶۸۵۶۷ - ۸۸۷۶۱۱۵۴  
فکس: ۸۸۷۶۰۹۹۴  
چاپخانه آلیک

**ALIK ARMENIAN DAILY**  
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,  
Tehran 15588339 11, Iran P. O. Box: 11365-953  
Tel.: (0098-21) 88768567 - 88761154  
Fax: 88760994  
E-mail : [info@alikonline.ir](mailto:info@alikonline.ir)  
[www.alikonline.ir](http://www.alikonline.ir)

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ  
ԼԻԱՅԵԻ ԵՒ ԱՄԱՆ ԼԻԱՅՈՂ**  
ՄԵԾԵՆԱԿԵՐԻ ԼՈՐՈՂՈՒՄ  
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ  
ՆՈՒ. 26320084 եւ 09124187835,  
Վահիկ Իսկանդարեան

**Computer AGMA**  
Համակարգչային ընկերություն  
خرید و فروش کامپیوتر  
ارتقاء سیستم  
سرویس در محل  
سخت افزار  
نرم افزار  
شبکه  
Tel: 88849305 & 88842385  
ایران شهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۲۲، واحد ۶

**7STARS**  
هفت ستاره آسمان آفتابی  
خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی:  
◆ Հայաստանում՝  
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում  
◆ Թուրքի անմիջական գործադրող՝  
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում  
مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان  
09303810625 WhatsApp tel: 021-88796742-3

Qeshm Air  
IRAN AIRTOUR  
VARESH AIRLINES  
Armenia airways

7setaretours

**Յարգելի նւիրապրու**  
Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նւիրապրության համար:  
«ԱԼԻՔ»-ի սիրով բարխում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:  
Այս դժուարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւաքք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամեն օր մուպք գործի Ձեր փուն:  
*Շարքեանց եւ, որ Դուք կաւ:*  
Յարգանօք՝  
«ԱԼԻՔ» օրաթերթի  
Յայտարարութիւնների բաժին

**«Հայրենիք»....**  
(Շաբ. 2-րդ էջից)  
մեր միջոցներով այն արդէն տպագրել է 40.000 տպաքանակով եւ մտել դպրոց:  
-Չնայած դասագրքի վերաբերելու եղած մասնագիտական կարծիքներին, ԿԳՄՍ նախարարն ասաց, որ պէտք է համակերպել, եւ ծնողները չպէտք է որոշեն դասագրքի բովանդակությունը: Ըստ Ձեզ, որն է այս մտեցման տրամաբանությունը, եւ ինչու է արշաւ սկսել դասագրքի վերաբերելու դասագրքի հեղինակի ու ԿԳՄՍ նախարարության կարծիքից տարբեր կարծիքներ յայտնողների դէմ:  
- Համակերպելու յորդորն ուղղակի դիմակազերծում է իշխանության նպատակարարութիւնը: Դա յստակ ուղերձ է, որ սա քաղաքական պատուէր է: Նախ «ծնողներ» կողմին շահարկելը մանկապուլիացիա է, որով-

հետեւ բառացի ասել եմ՝ գիտական հանրոյթ, մանկավարժներ, «ինչու ոչ» նաեւ ծնողները»: Իսկ ծնողի կարծիքը լսելու պարտականություն, այնուամենայնիւ, նախարարությունը ունի: Հանրային կարծիքը պարտադիր է, գործ ունենք քաղաքացու արժէքային համակարգը ձեւաւորման հետ: Իսկ նախարարությունն էլ դատարան չի, որ անդրդուելի վճիռներ կարգեն: Ի դէպ, Հայոց եկեղեցու պատմությունը հանրակրթական ծրագրերից հանելը հէնց ծնողների բողոքով մեկնաբանւեց:  
Ոչ մի «արշաւ» էլ չկայ կայ մեր պատմությունը չաղաւաղելու, մեր ինքնությունը չնստեցնելու, մեր ժառանգությունն ու անցեալը գիտականօրէն օրհնելու արժեւորելու եւ արժանապատիւ քաղաքացի ձեւաւորելու պահանջ:  
**Չրուցեց Գոհար Յակոբեանը  
Աղբիւրը՝ «Aravot.am»**

**سفر دوستان قرن**  
SAFAR DOUSTAN GHARN  
TOUR & TRAVEL AGENCY  
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفر دوستان قرن  
نماینده رسمی  
هوایمایی قشم ایر  
Թուիքքներ է իրականացնում  
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝  
դէպի Հայաստան եւ վերադարձ  
**ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ**  
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۲۱، طبقه همکف  
[WWW.SAFARDOUSTAN.COM](http://WWW.SAFARDOUSTAN.COM)  
۸۸۵۱۴۰۵۰

**دیدهار سیر گیتی**  
DIDAR SEIR - E - GITY  
Միջազգային  
ուղևորափոխադրումների  
27 արաւայ փորձով այն  
պատրաստ է սպասարկել Ձեր  
հայրենակիցներին  
Ամենօրյա ուղևորություն VIP  
համակարգով

مسافری بین المللی  
www.didarseir.ir  
Email: info@didarseir.ir

دفتر مرکزی  
تهران، میدان آزادی، پانته غرب، شرکت مسافری  
بین المللی دیدهار سیر گیتی  
تلفن  
• 021-44693051-4  
• 021-44659543  
• 021-44663893-4

نماینده رسمی  
چهل و شش متری غربی نارمک، انتهای خیابان گلستان، خیابان گلشن دوست (مسئله باختر)، نبش خیابان طوروسیان (84)، پلاک 43  
تلفن  
• 021-77281769  
• 021-77259537  
• 09366955599  
واتساب  
• 021-77281287  
• 021-77281288  
ایستگاه @  
Didarseiregity

دفتر ایروان  
خیابان نالهاندیان - شماره 28  
تلفن  
+374-91371237  
+374-91595521  
• Utly տեղանոց (VIP)  
• Արժու մահակաւ  
• Սոնիտորով  
• Յագացած է WiFi-ով

